Քաղցրացո՛ զժամս իւր յետին, ըզկըլթոտ քայլս իւր պնդեա՛ .
Եւ զերդ գրաւ ինչ նուիրեալ 'ի յոյս ու 'ի սէր գեղաւէտ ,
Թո՛ղ անցցէ կարգ ըստ կարգէ յանցաւորէն փախըստեայ՝
Առ որ կացցէ զմ՛ուրն ըղյետ .

Մինչեւ յօրն այն ուր թափանց ընդ մութ կամարս մեռելոց՝
Եօթնահնչակ բարբառ մի զնա հրաւիրեալ ընդ երկին ,
Համանգամայն զարթուսցէ զնիրհօղսն 'ի ստուեր փրկագործ
Ցաւէրժակա՛ն սուրբ խաչին .

ԼԱՄԱՐԹԻՆ

Ա–է–ի– Կ–ր–պէ–եան .

ՄԱՐԴԿԱՅԻ՛Ն ԿԵԱՆՔ

(Շարունակութիւն . տես թիւ 6 .)

Բ . Արբունք .

Արբունքը՝ մարդոյ կենաց երկրորդ շրջանն , Պատանեկութեան ընթացակից է և երիտասարդութեամբ կը վերջանայ . Այս հասակը կըսկսի երկրորդ ակռայ հանելէն . Մինչեւ այս ատեն գոդյես բնութեան ձիգն էր իւր աւանդը պահպանել ու աճեցնել . միայն Սննդեան և աճեցման հարկաւոր ծառայութիւններ կը մատուցանէր նա դեռահաս մարդոյն , որ կ'ապրէր անգործ եւ բոլորովին տարբեր կեանքով մը . միշտ ակար , ինքն՝ իւր մէջ ամփոփեալ , առանց իւր նմանեաց հետ հաղորդակցելու կարողութեան . բայց ահա՛ վաղ ընդ փոյթ կենաց պայմանները կը բազմապատկին , մարմինը հետզհետէ աճելով և կատարելագործուելով նորանոր զօրութեամբ և կարողութեամբ կը զարգանայ . Բընութեան Գարունն է սա , եղանակ հաճոյից և զուարճութեան , յորում բուռն կրքեր և զանոնք զսպելու համար մարդկային արուեստին բնութեան դէմ հնարուած միջոցներ իրարու դէմ կը մարտնչին .

Պատանեկութեան նշանները կ'ըսկսին երեւիլ մանչերուն՝ հասարակօրէն 14–16 , իսկ աղջիկներուն՝ 12–14 տարեկան հասակին մէջ , թէեւ այս ժամանակամիջոցն կը տարբերի կենաց զանազան պարագաներուն՝ Սննդեան , Կլիմային և եղանակի տարբեր աստիճաններուն համեմատութեամբ . Սովորաբար սնդարար և առատ կերակուր ունեցող , տաք կլիմայի մէջ ապրող մանկունք աւելի կանուխ կը ստանան աճումն , քան հակառակ պարագայի մէջ գտնուողներն . Մանչերն աղջիկներէ աւելի երկար ժամանակի պէտք ունին այս հասակին հանելու համար . վասն զի իրենց մարմինը աւելի հոծ , ջղերը պինդ , ոսկորներն հաստակազմ և հասակը մեծագիր ըլլալով առ նուազն 2–3 տարի աւելի կ'ուզէ աճումն ստանալու համար .

digitised by A.R.A.R.@

մինչեւ աղջիկունք աւելի փափուկ և փոքրոգի կազմութիւն ; կ'ունենան ընդհանրապէս .

Այս նշանները են մանչերուն համար ցայլից եւ յօդակապներուն վրայ ընդարձակցումն , ազուամազերու երեւիլն և ձայնի փոփոխութիւնն ու զօրաւոր ուժգնութիւնը . իսկ աղջիկներու համար՝ որովայնի և ստեանց աճումն , ձայնի նուաղ փոփոխութիւն , և երկու սեռի համար ուրիշ մասնաւոր և ծանօթ ստացումներ :

Կենաց այս շրջանին մէջ աճումն օր ըստ օրէ իւր կատարելութեան կը դիմէ և մարմինը փութով զգալի տարբերութիւն մը ստանալով կը հասնի այն կէտին , ուր պէտք է մնայ միշտ : Ընդունուած Սննդարար հիւթերը այլ եւս աճման այնքան հարկաւորութիւն չունենալով կենդանական սերմն կազմելու կը ծառայեն : Ծննդագործութեան և տեսակի յաջորդութեան գործարանները կը կատարելագործուին երկու սեռի մէջ . կիրքերը եռանդուն՝ , խորհուրդները հասուն , և 'ի մանկութենէ գործադրուած սովորութիւնները , մանաւանդ սոյն պարբերութեան վերջին տարիներուն մէջ , հաստատուն և դժուարափոխելի վիճակ մը կ'ըստանան : Երբ այս կատարելութիւնները ստացուին , ամուսնութեան աստուածադիր խորհուրդը կարելի է կատարել , որոյ նպատակն է Արարչի ձեռագործը բազմացնել և ներքին կենդանական զօրութիւնը՝ կենդանի էակներ յառաջ բերելու գործածել : Քանի որ զանազան կլիմայի համեմատ աճումն կանուխ կամ ուշ կ'ըստանայ իւր կատարելութիւնները , ըստ այսմ և ամուսնութեան պայմանաժամը կը տարբերի զանազան գաւառաց՝ համար : Հասարակօրէն տաք երկիրներու մէջ կանուխ , իսկ ցուրտ գաւառներուն մէջ աւելի ուշ կ'ըստացուի այս ատակութիւնը : Այս բարի նպատակաւ միայն ամուսնութիւնը օգտակար կրնայ լինիլ . իսկ երբ անսանձ կրքերն ու հեշտութիւնները խզեն չափաւորութեան սահմանը , անթիւ վնասներ և մեծամեծ ցաւ ու հիւանդութիւններ մարդկային կեանքը սպառելով , անկարողութեան և մինչեւ իսկ մահուան կը դատապարտեն , հակառակ տեսակն բազմացնելու նպատակին , որոյ օրինակները բազմաթիւ են դժբաղդաբար : Այս բարենպատակ խորհուրդը զոր Եկեղեցին և Ս . Աւետարանը նուիրագործած են , Աստուածային բանիւ իւրաքանչիւրի կամաց թողուած է , որում միմիայն ուղիղ և հասուն մտածութիւնները կարող են առաջնորդել :

Այս պարբերութիւնը կը տեւէ ընդհանրապէս մինչեւ 23 – 25դ տարին , որ ատեն հասակը կը դադարի աճմանէ . և մարմինը ուրիշ ամեն հասակներէն աւելի ամուր ըլլալուն , մեռնելը քիչ անգամ կը պատահի , եթէ արտաքին պատճառներ տեղի չտան .

Գ . Այրութիւն .

Մարմինը ստացած է արդէն իւր բարձրութեան կատարելութիւնը . միայն թէ զանազան մասունքները տակաւին բարակ եւ երկայնաձեւ են . բայց աչս հետզհետէ միսը կ'առաւելու . ջիղերը կը պնդանան , փորոտիքը կը լեցուին , անդամները կը ձեւակերպին և մինչև 36դ տարին , մարդկանց համար , մարմինը թէ լայնութեամբ , թէ հաստութեամբ և թէ երկարութեամբ աճման կատարելութեան մէջ է . իսկ կանանց համար աւելի կանուխ : Արք սովորաբար հաստամարմին և ջլաւոր կ'ըլլան . իսկ կանայք փափկա-

մարմին և տկար ։ Զօրութիւն և մեծութիւն՝ արանց . իսկ վայելչութիւն և գեղեցկութիւն՝ կանանց ձիրք են ։

Ահա այս հասակին մէջ մարդը ըստ ամենայնի ստացած է իւր կոչման արժանաւորութիւնը . հարկ է նկատել զայն ուրեմն կենաց այս շրջանին մէջ ևս, դիտել նորա գերիշխանութիւնը, որ արտաքուստ իսկ աններև կը փայլի իւր դրից, կերպարանաց և ընթացից մէջ ։ Ամենայն ինչ նորա իշխանութիւնը կը ներկայացնեն երկրի վրայ, ամենայն ինչ կը ցուցնեն նորա գերազանցութիւնը երկրային ամեն կենդանի գոյացութեանց վրայ ։ Իւր ուղիղ և բարձրադիր հասակաւն եւ մարմնոյն յօրինուածովն հրամանատարի կերպարանք մը կը ներկայացնէ . գլուխը 'ի վեր յերկինս կը հայի իւր Արարչի հետ խօսակից ըլլալու համար և վեհապանծ դէմք մը կը կրէ, ուր դրոշմուած է իւր արժանաւորութեան կնիքը, ուր յայտնի նշանագծերով նկարուած է հոգւոյն պատկերը ։ Ներքին զգացմանց՝ հոգւոյ գործողութեանց զօրութիւնը կը թափանցէ, կ'անցնի նիւթական գործարանաց մէջէն և երկնային հրով մը կը վառէ և կը կենդանացնէ երեսաց ամեն գծերը, որք ճշգութեամբ կը պատմեն հոգւոյ ներքին կրքերը ։ Իւր վայելուչ և վեհ դիրքը, հաստատուն և համարձակ գնացքը, իւր բովանդակ յօրինուածքը՝ վկայ են իւր ազնուութեան և բարձր արժանաւորութեան . ոտից ստորին ծայրերով միայն կը շօշափէ երկիրն, 'ի հեռուստ միայն կը դիտէ զայն և գոգցես կ'ուզէ յայտնել նմա իւր արհամարհելն զաշխարհ, և փափաքելն 'ի վեր յերկինս՝ դէպ 'ի հոգեղէնաց բնակարանը ։ Իւր բազուկները իբր նեցուկ չեն ծառայեր մարմնոյն, իւր ձեռքերը գետին կոխելու համար չեն, պէտք չէ որ նորա յաճախակի ընդհարմամբ կորուսանեն իրենց նրբութիւնը և զգայնութիւնը, նորա աւելի բարձր պաշտօնի մը կոչուած են, նորա պիտի ծառայեն մարդոյ կամաց հրամանները յայտնելու, իրերը շօշափելու, խոչընդոտները գլելու, մնասակար դիպուածներն ու ընդհարումները արգիլելու, հաճոյական իրերը գրկելու, բռնելու և միւս զգայարանաց հաղորդելու համար ։

Երբ հոգին հանդարտ է, դիմաց ամեն գծագրերը հանդիստ վիճակի մէջ են . սոցա համաձայնութիւնը, միութիւնը և ամբողջութիւնը՝ մտածութեանց քաղցր ներդաշնակութեան և ներքին հանդարտութեան նշանակ են ։ Իսկ երբ հոգին, զանազան ախտիւ, խռովեալ լինի, մարդոյ դէմքը կենդանի պատկեր մը կը դառնայ, ուր նկարուած կ'ըլլան, այնչափ փափուկ որչափ ճարտար կերպիւ, հոգւոյ ամեն շարժումներն, որոյ կենդանի և արագ ազդեցութիւնները, յակամայից իսկ, առանձին բուռն նշաններով կ'ազդեն դիմաց վրայ և կը յայտնեն ներքին գաղտնի խռովութեանց պատկերը ։

Աչքերը, որք ամեն գործարաններէ աւելի յարաբերութիւն ունին հոգւոյ գործողութեանց հետ, այս պաշտաման մէջ ամենայաջող դեր մը կը խաղան ։ Աչքը կը բացատրէ ամենակենդանի կրքերն և ամենախռովայոյզ դրդումները, ինչպէս նաև ամենաքաղցր շարժումներն և ամենափափուկ զգացումները . նա կը ներկայացնէ զանինք ամեն զօրութեամբ եւ ամեն ճշգութեամբ ։ Աչքը կ'ընդունի եւ կ'անդրադարձէ մի և նոյն ժամանակ մտածութեանց լոյսը և զգացմանց ջերմութիւնը . նա՝ մտաց զգայարանն և իմացականութեան լեզուն է ։

digitised by A.R.A.R.@

Աչքերէն յետոյ, Ցօնքերը գլխաւոր ծառայութիւն մը կը մատուցանեն այս պաշտաման մէջ։ Ցօնքերը՝ պատկերի մը ստուերներն են, որք նոքա գոյները և ձեւերը կը յայտնեն և կը կենդանացնեն։ Արտեւանունքը պաշտօնակից կրնան համարուիլ յօնից։ Ձակատը՝ դիմաց մեծագոյն մասն է, որ կ'օգնէ նորա գեղեցկութիւն տալու, եթէ ձեւաւոր և չափաւոր մեծ, լայն, կոր կամ տափարակ լինի։ Քիթը դիմաց դուրս ցցուած մասն է, որ քիչ շարժուն ըլլալով միմիայն բուռն կրքերը կրնայ յայտնել և աւելի դիմաց ձեւաւոր գեղեցկութեան՝ քան թէ կրից բացատրութեան կը ծառայէ։ Բերանն ու շրթունքները, աչքերէն յետոյ, երեսաց ամենաշարժուն եւ բացատրող մասերն են. կրքերը կը ներգործեն ասոնց վրայ և ասոնց ըստացած տարբեր ձեւերովն ու շարժումներովը կը բացատրուին։ Ձայնի գործարանը աւելի կը կատարելագործէ զոսոնք, և միւս ամենէն աւելի կենդանի և խօսուն կը գործէ. ամեն բառ, ամեն հնչիւն, ամեն ձայն տարբեր շարժումներ յառաջ կը բերեն շրթանց վրայ. և այս շարժումներն, որչափ արագ և խառն ըլլան, միշտ զգալի տարբերութիւններ ունին իրարմէ. տեսնուած են խուլ մարդիկներ, որք շրթանց տարբեր շարժումներուն ուշ դնելով հասկցած են խօսողի միտքը։ Ծնօտից միայն վարինը շարժուն է. այս եւս միայն բուռն կրքերը կրնայ յայտնել. վիշտը, հաճութիւնը և ձանձրոյթը՝ յօրանջումն կը պատճառեն, որ ծնօտից բացուելովն կը կատարուի. վշտաց և հաճութեան ատեն յօրանջումը ուժգին և արագ, իսկ ձանձրոյթի ատեն թոյլ և անզօր կ'ըլլայ։

Երբ խիստ ցանկալի կամ ատելի իր մը մտածութեան մէջ լինայ, ներքին շարժում մի տեղի կ'ունենայ առագաստին վրայ, որ թոքերուն հաղորդուելով կը պատճառէ զօրաւոր և արագ շնչառութիւն մի, որ է հառաչանք։ Երբ հոգւոյն բաղձանքը անկատար մնայ, հառաչանքները կը կրկնուին, տրտմութիւնը, որ հոգւոյ վիշտն է, կը յաջորդէ առաջին շարժմանց, եւ երբ վիշտը խորին և տեւական ըլլայ՝ արտասուքը կ'ըսկսի հոսիլ, շնչառութիւնը ակամայարագ յաջորդութեամբ, ուժգնութեամբ և ձայներով կը կատարուի, որ կը կոչուի հեծկլտանք. երբ հեծկանքը տեւական ու շարունակեալ ըլլայ, կ'ըսուի ողբ կամ լաց։

Ծիծաղը, որ երբեմն ընդմիջեալ և շարունակական ձայներով և շրթանց բացուելովը կամ երկարելով կը կատարուի, ներքին հաճութեան և գոհունակութեան նշան է. երբեմն եւս մերժումն կամ ծաղրածութիւն կը յայտնէ, բայց այս պարագայիս մէջ, վարի շուրթն վերինին յենլով կը բարձրացնէ զայն փոքր ինչ։ Աչքերը դիմաց միտձեւ մասերն են, որք ինքնին շարժում մը չունին, այլ միայն իրենց յակամայս ստացած տարբեր գոյներով կը բացատրեն ներքին զանազան կրքերը։ Ասոնք, ինչպէս նաեւ կզակները, ականջներն և քունքերը աւելի դիմաց գեղեցկութեան՝ քան ներքին զգացմանց բացատրութեան կը ծառայեն։ Ամօթոյ, բարկութեան, հպարտութեան և ուրախութեան ատեն կարմրագոյն կը ներկուին այտերը. իսկ երկիւղի սարսափի եւ տրտմութեան ատեն՝ դեղնագոյն։ Գոյներու այս փոփոխութիւնները իսպառ աղատ են կամաց իշխանութենէ։ Գլուխն եւս, իւր ամբողջութեամբ, տարբեր կրից համեմատ զանազան դիրքեր կ'ըստա-

digitised by A.R.A.R.@

նայ. խոնարհութեան, պատկառանայ և տրտմութեան ատեն վար կախուած. թուլութեան և դիմութեան ատեն մի կողմն հակած. յանդգնութեան ատեն՝ բարձրացած. յամառութեան ատեն՝ ուղիղ և անշարժ. զարմացման ատեն՝ սակաւ ինչ դէպ ետեւ ծռած. մերժման, ծաղրածութեան, բարկութեան և ցասման ատեն՝ երկու կողմը յաջորդական շարժումներով կը տեսնուի։

Խանդաղատանայ, ուրախութեան, սիրոյ, ամօթոյ և գթութեան ատեն աչքերը կը ցցուին, առատ խոնաւութիւն մը զանոնք կը մթագնէ եւ արտասուք կը վազեն։ Տրտմութեան ատեն՝ բերանի երկու կողմերը կ'իջնան, վարի շուրթն կը բարձրանայ, կոպերը կիսով չափ կը փակուին, բիբը կը բարձրանայ և վերի կոպերուն տակ կը ծածկուի կիսով, դիմաց ջղերը կը թուլնան և դէմքը աւելի երկարած կ'երեւի։ Երկիւղի, սարսափի ատեն՝ ճակատը կը խորշոմի, կոպերը կարելի հեղաձին չափ կը բացուին, բիբը վարի կոպերով կը ծածկուի կիսով, բերանը կը բացուի, շրթունքը կամիրսին եւ վարի ու վերի ատամները կը տեսնուին։ Արհամարհանաց և հեգնութեան ատեն՝ վերի շուրթն կը բարձրանայ մի կողմէն, ատամները կը տեսնուին, մինչդեռ շրթանց միւս կողմը ծիծաղի փոքր շարժումներ կը տեսնուին, քիթը բերնի բացուած կողմէն կը խորշոմի և կը պրկի. նոյն կողմի աչքը գլուխէ կը փակուի և երկու բիբերը 'ի վայր կը հակին։ Նախանձի, փափաքանաց և հեգնութեան ատեն՝ յօնքերը կ'իջնան, կոպերը կը բարձրանան, բիբերը 'ի վայր կը հակին, վերի շուրթն կը բարձրանայ երկու կողմէն և ծայրերը դէպ 'ի վար կը ծռին փոքր ինչ, իսկ վարի շրթան միջնավայրը կը բարձրանայ։ Ծիծաղի ատեն՝ բերանի երկու ծայրերը կ'երկարին և կը բարձրանան, այտերու վերին մասերը կը ցցուին, աչքերը առաւել կամ նուազ կը բակուին, վերի շուրթն կը բարձրանայ, վարինը կը ցածնայ, բերանը կը բացուի եւ քթին խորշերը վարի կողմէն կ'ընդլայնին։

Բոց յայտնանէ, բազուկները, ձեռքերը և բովանդակ մարմինը կը մատնակցին կրքերը յայտնելու պաշտօնին և կարելի է զանոնք եւս ներքին զգայմանց երկրորդական կամաւոր մեկնիչներ անուանել։ Զրինակի համար, ուրախութեան ատեն՝ ինչպէս աչքերը, գլուխը, նոյնպէս եւ բազուկները, ձեռքերը և բովանդակ մարմինը տրագ շարժման մը մէջ կը տեսնուին. իսկ թուլութեան կամ տրտմութեան ատեն՝ թոյլ և դանդաղ շարժումներ միայն կ'երեւին։ Սիրոյ, ըղձանաց եւ յուսոյ ժամանակ՝ գլուխը կը բարձրանայ, աչքերը յերկինս կ'ուղղուին հայցուածք մի ընելու ձեւով, բազուկները կը տարածուին, ձեռքերը կը բացուին և մարմինը յառաջանալով գոգցես սիրելի առարկայն գրկելու կը դիմեն։ Ընդհակառակն, երկիւղի և ատելութեան ժամանակ՝ ձեռքերը յառաջ կը դիմեն մերժման, ընդդիմանալու և հեռացնելու ձեւով և մարմինը դէպ ետեւ կը կասի։ Այս ամեն շարժումները կամաց ազդեցութեամբ ներքին կրքերը յայտնելու կ'ա ժանդակեն։

Բոլոր կրքերը հոգւոյ շարժումներ ըլլալով, որոց շատերը վերաբերութիւն ունին զգայարանաց հետ, կը նան մարմնոյ մանաւանդ դիմաց շարշումներով գուշակուիլ։ Բայց կարելի չէ մարմնոյն ձեւէն՝ գեղեցկութենէ կամ տգեղութենէ, հոգւոյն բնութիւնը՝ լաւութիւնը կամ յառութիւնը հետեւցընել, ինչպէս տարածուած

digitised by A.R.A.R.@

էր այս նախապաշարումը նախնեաց մէջ. ամենատգեղ անձի մէջ կարելի է ամենաբարի զգացումներ և հոգի գըտնել և փոխադարձաբար. մարմնոյ ձեւերը երբէք յարաբերութիւն չունին հոգւոյ բնութեան հետ. հոգին աննիւթ և անձեւ է.

Ասոնք մարդոյ կենաց պատմութենէն առաջ, լոկ իւր ներքին և արտաքին շարժմանց յարաբերութեան նկարագրութիւններն էին, որք մեծաւ մասամբ կենդանեաց վրայ կը պակսին։ Այսպէս մարդկային մարմնոյ մէջ մի մասունքն մեծ տարբերութիւն ունին կենդանեաց կազմութենէն, որոց մանրամասն բաղդատութիւնը աւելորդ է աստանօր ներկայացնել։

Ինչպէս յիշեցինք մարդը կենաց այս երորդ շրջանին մէջ ստացած է իւր ներքին և արտաքին կարողութեանց կատարելութիւնը. զօրութիւնները իրենց բարձրագոյն կէտին հասած են. խորհուրդ, դատողութիւն, իմացականութիւն, ոյժ, բնական և բարոյական տաղանդներ վերջին կէտին վրայ են. մանկութեան և պատանեկութեան սերմերը, թէ բարի և թէ չար, պտղաբերութեան վիճակի մէջ են։ Հարկ է այսուհետեւ վերստին այն բարձր աստիճաններէ վար իջնալ հետ զհետէ։ Տարիքը 36–40 ամեայ շրջանը բոլորեց։

(Շարունակելի։)

ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ
ԵՒ ՏԻԵԶԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ
ՊԱՐԶ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն, տես թիւ 6.)

ԳԼՈՒԽ Ի.

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ՄԱՐՄՆՈՑ

Շարունակութիւն։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՔ ՄԱՐՄՆՈՑ

Բիչիօլայի պատմութիւնը. — Գործարանաւոր եւ անգործարանաւոր մարմիններ. — Բիւրեղացումն. — Ծակոտկէնութիւն. — Առաձգութիւն. — Ճնշականութիւն. — Բաժանականութիւն։

ՕՐ. ԹԱԳՈՒՀԻ. — Բիչիօլան կարդացա՞ծ էք։

ՄԱՐԻԱՄ. — Ո՛չ, օրիորդ, ի՞նչ է Բիչիօլան։

ՕՐ. ԹԱԳ. — Սքանչելի գիրք մ'է, որոյ մէջ կը պատմուի բանտի մը բակին մէջ բուսած փոքրիկ տունկի մը պատմութիւնը։ Այս բակը խեղճ կալանաւորի մը շրջագայութեան յատկացած էր, որ տեսաւ այս տունկը երբ անոր առաջին՝ երկու տերեւները տակաւին ձեր ճկոյթ մատին եղունգէն փոքր էին։ Զայն ջրեց, խնամեց, սիրեց և Բիչիօլա (փոքրիկ) անուանեց։ Երբ Բիչիօլան քիչ մը մեծցաւ, իւր կնքահայրը վերցուց այն երկու մեծ սալաքարերը, որոց մէջ ծնած էր նա և իբր անձուկ որրանի մը մէջ պարփակուած։ Բիչիօլա այսու ազատութիւն ստանալով՝ իւր արմատներն երկրի խորերն արձակեց և իւր ստեղը դէպ 'ի երկինք բարձրացուց. յետոյ օր մ' իւր մէկ ոստին վերայ գեղեցիկ

digitised by A.R.A.R.@